

ԵՊՀ-ի ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ 1975 Թ. ԿԱՏԱՐԱԾ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1975 թ. համալսարանի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայում կատարված հնագիտական դաշտային աշխատանքները ընթացել են երեք ուղղություններով՝


1) Լաբորատորիայի աշխատակիցները մասնակցել են ՍՍՀՄ ժողովուրդների պատմության և մշակույթի հուշարձանների համահավաքի միացյալ արշավախմբի աշխատանքներին:

2) Ծարունակվել են ակադ. Բ. Բ. Պիտրովսկու ղեկավարությամբ 1970 թ. սկսված Մոխրաբլուրի սիստեմատիկ պեղումները:

3) Պեղումներ են կատարվել Ծամիրամի հուշարձանախմբում:

ՀՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի, համալսարանի հայագիտական կենտրոնի և ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միացյալ երթուղային արշավախումբը 1975 թ. ուսումնասիրության ենթարկեց Հաչկական ՍՍՀ Աշտարակի և Նահիրիի շրջանների հուշարձանները: Այս շրջանները ենթարկվեցին համատարած և մանրակրկիտ հետախուզության, որի ընթացքում դիտարկվեցին և ուսումնասիրվեցին բոլոր

հնագիտական արժեք ներկայացնող օբյեկտները՝ սկսած հետպոլեոլիթյան ժամանակաշրջանից, բացառությամբ հանրաճանաչ միջնադարյան եկեղեցիների, սիստեմատիկ պեղումների ենթարկվող Ամբերդ ամրոցի և Օջականի քաղաքատեղի: Հետախուզվող տեղանքը տեղադրված է ծովի մակերևույթից 1000—2100 մ. բարձրության վրա, Արագած լեռան հարավային լանջերի, Արա լեռան և Ծաղկունյաց լեռնաշղթայի վրա: Արշավախումբը հետախուզեց և բացահայտեց հուշարձաններ ավելի քան 30 վայրերում: Արշավախմբի ուսումնասիրած հնագույն հուշարձանները պատկանում են այսպես կոչված «կուր-արաքսյան» մշակույթի զարգացած (մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կեսեր) և ուշ շրջաններին: Ուսումնասիրված հնավայրերի մեջ ընդգրկվում են 6 հուշարձաններ վաղ բրոնզեդարյան (այսպես կոչված «կուր-արաքսյան» մշակույթ) շերտով, 4 հուշարձաններ՝ միջին բրոնզեդարյան շերտով (մ. թ. ա. 2-րդ հազարամյակի 1-ին կես), 22 հուշարձաններ՝ ուշ բրոնզե դարի և վաղ երկաթե ժամանակաշրջանի (մ. թ. ա. 15—9 դդ.) շերտով, մեկ ուրարտական ամրոց, 7



հուշարձաններ՝ հելլենիստական ժամանակաշրջանի շերտով, վաղ և զարգացած միջնադարյան շրջանի (մ. թ. 5—13-րդ դդ.) 12 բնակավայրեր և ամրոցներ:

Արշավայրումըը հայտնաբերեց մի շարք մինչ այժմ չհիշատակված հուշարձաններ, որոնք են. ամրացված բնակավայր Գազանօձը վաղ բրոնզեդարի և վաղ երկաթե դարի շերտերով, Սեղանասար բնակավայրը (միջին բրոնզե դար). քաղաքատեղի Մոտկան բերդը, Թղիթը, Թուփբարը, բնակավայր-ամրոց Գետամեջը, պահակակետ Սահակաբերդը (մեծ մասամբ թվագրվում են վաղ երկաթե ժամանակաշրջանով), դամբարանադաշտ Աշտարակի մոտ, միջնադարյան մոնումենտալ կառույցների հետքեր Արա գյուղում և Կուռ-Թափա վայրում: Առանձնահատուկ ուշադրության են արժանի վաղ երկաթե ժամանակաշրջանի քաղաք-ամրոց Թղիթը և Մոտկան-բերդը: Թղիթ քաղաք-ամրոցը տեղադրված է բարձր լեռնային անտառի մոտ, աչքի է ընկնում ճարտարապետական շինությունների բացառիկ պահպանվածությամբ: Նրա միջնաբերդի արևմտյան կողմի պարսպահատվածը, կառուցված բազալտե մեծադիր սալերից և ամրացված հզոր աշտարակներով, գետնի մակերևույթից բարձրանում են 6—7 մ:

Մոտկան-բերդ քաղաքատեղին զբաղեցնում է մոտ 100 հեկտար տարածք: Այն փրված է երեք բլուրների վրա: Կենտրոնական բլուրը, որը միաժամանակ հանդիսացել է միջնաբերդ, շրջափակված է մի քանի շարք հզոր պարիսպներով (նկ. 1-ին): Քաղաք-ամրոցի կառուցման համար պահանջվել է մարդկային աշխատանքի վիթխարի ներդրում: Այսպես, միայն միջնաբերդի հյուսիսային մուտքի համար, բազալտե ժայռի մեջ ճանապարհ է փորված 150 մ երկարությամբ, որի լայնությունը հիմնական հատվածում հասնում է 4 մետրի, իսկ փորվածքի խորությունը տեղ-տեղ 3—4 մ է:

Ուսումնասիրված ամբողջ հնավայրերի մեջ ուշ բրոնզե դարի և վաղ երկաթե ժամանակաշրջանի հուշարձանները հատուկ տեղ են զբաղեցնում: Այս խմբի մեջ նկատվում է վաղ երկաթե դարի (մ. թ. ա. 12—9 դդ.) քաղաք-ամրոցների բացարձակ գերակշռությունը, նախորդ ժամանակաշրջանների հուշարձանների նկատմամբ: Ուսումնասիրվող տարածքում մ. թ. ա. 2—1 հազարամյակի ընթացքում ակնհայտորեն նկատվում է քաղաքակրթության հզոր վերելք: Յուրօրինակ խումբ են կազմում անտիկ հուշարձանները: Այս ժամանակահատվածի բնակավայրերը գոյատևել են նախորդ դարերի հուշարձանների մեջ, որի

ընթացքում հնագույն կառույցների ավերակները օգտագործվել են հելլենիստական ժամանակաշրջանի բնակչության կողմից: Ուշագրավ են նաև վաղ միջնադարյան (մ. թ. 4—7-րդ դդ.) կոթողները, որոնք կարող են լուրջ ուսումնասիրության: Ամփոփելով վերոհիշյալ փաստերը, կարելի է ասել, որ հետագա ուսումնասիրությունների համար առավել հետաակարալից են նախատարտական (մ. թ. ա. 13—9-րդ դդ.) և վաղ-միջնադարյան (մ. թ. 4—7-րդ դդ.) հուշարձանների ուսումնասիրությունը և նրանց կողմից լուսաբանվող պրոբլեմների հետազոտումը:

Հայկական լեռնաշխարհում վաղ երկրագործական քաղաքակրթության ծաղկման և անկման, տնտեսական և սոցիալական բեկումնային պրոցեսների պրոբլեմների պարզաբանմանը մեծապես նպաստում են Մոխրաբլուրի պեղումները: 1975 թ. աշնանային սեզոնի ընթացքում շարունակվեցին հնավայրի 3-րդ շինարարական շերտի պեղումները: Երևույթ, նախնական տվյալներով, թվագրվում է մ. թ. ա. 2500—2200 թթ.: Պեղումները տարվում են բնակավայրի կենտրոնական հատվածում, 1-ին պեղավայրին կից: Հայտնաբերված են նյութական և հոգևոր մշակույթի բազմաթիվ ստարկաներ: Գտնված նյութերից առավել ուշագրավ է բարձրորակ, լավ թրծված սև փայլեցված զարդարուն խեցեղենը: Պաշտամունքի առարկաների շարքում հատուկ տեղ են գրավում ցուլերի խիստ ոճավորված կավե արձանիկները: Երտի ճարտարապետական մնացորդները ներկայացված են աղյուսաշեն տներով: Որոշակիորեն գերակշռում են ուղղանկյուն հատակագծերը:

1975 թ. Մոխրաբլուրի պեղումների արդյունքների և նախորդ տարիների տվյալների համադրումը որոշ պարզություն է մտցնում մ. թ. ա. 3-րդ հազարամյակի 3-րդ քառորդի բնակավայրերի կառուցաստման ընդհանուր սկզբունքի ըմբռնման մեջ:

Մոխրաբլուրի սխտեմասիկ պեղումների և համանման հուշարձաններում կատարված դիտարկումների համադրումը թույլ է տալիս ենթադրություններ անելու նախնադարյան Հայաստանի տնտեսական զարգացման օրինաչափությունների մասին:

Մ. թ. ա. 3-րդ հազարամյակի կետերին քաղաքակրթության զարգացման մեջ առաջադիմական դերը դաշտավայրային համայնքներից անցնում է նախալեռնային բլրանակավայրերին: Ըստ ակադեմիկոս Բ. Բ. Պիրոտովսկու հիպոթեզի, այդ երևույթը պայմանավորված էր ոչ միայն յայլադային անասնապահության գոյացմամբ, ինչպես են-

թաղրվում էր մինչ այժմ, այլև վաղ-երկրագործարկական տնտեսության ճգնաժամով:

Վերջինն բացատրվում է ոռոգման ջրի պակասությանը, հողամշակման տեխնիկայի ցածր մակարդակով (դաշտերի աղակալում) և կենտրոնացված խոշոր մարդկային կոլեկտիվների բացակայությամբ:

Ինչպես հայտնի է, Հայաստանում հնագույն կենտրոնացված միասնատությունը Ուրարտուն էր: Մինչև վերջերս ընդունված էր, որ պետականության ձևերը առաջին անգամ ուրարտացի նվաճողների կողմից են բերվել Արևելյան Հայաստան, որտեղ այդ ժամանակ տոհմատիրական կարգերը քայքայման պրոցեսում էին գտնվում: Ենթադրվում էր, որ մ. թ. ա. 2-րդ և 1-ին հազարամյակների սահմանագլխին դեռևս նոր էր ձևավորվել ցեղային արիստոկրատիան՝ և տարածված էր ընտանեկան համայնքը:

Միայն վերջերս հաջողվեց ցույց տալ, որ մ. թ. ա. 12-րդ—9-րդ դդ. Արևելյան Հայաստանի հասարակությունը ավելի բարդ կառուցվածք ուներ և բաղկացած էր առնվազն երեք կազմակերպված դասերից՝ իշխանավորներից (բազիլևներ, կամ մախարարներ), պրոֆեսիոնալ զինվորականությունից և ազատ համայնականներից: Հասարակության նմանօրինակ կառուցվածքը բնորոշ է ոչ թե ոսպնական դեմոկրատիային, այլ վաղ դասակարգային հասարակությանը: Այդ ժամանակաշրջանում ձևավորվել են այն էթնիկական և սոցիալական խմբավորումները, որոնք, հետագայում ուրարտական արձանագրություններում «երկիր» են անվանել: «Երկրները» կամ իշխանությունները սովորաբար համապատասխանում էին մեկ կամ մի քանի որոշակի բնաշխարհագրական միկրոշրջանների: Ամեն մի իշխանություն մի քանի բնակավայրեր էր ընդգրկում, որոնք քանակը երբեմն երկու տասնչափ էր հասնում: Այդ բլրնակավայրերից մի քանիսը իրավամբ կարող են քաղաք կոչվել:

Նախաուրարտական «երկիրն» համապատասխանող բնակավայրերի նման խմբավորումներից մեկի ուսումնասիրությունը սկսվեց 1975 թ. հայագիտական կենտրոնի արշավախմբի կողմից: Նրա կենտրոնական հուշարձանը հանդիսանում է Ծամիրամի քաղաքամրոցը, որտեղ սկսած 1920-ական թթ. մակերեսային դիտարկումներ են կատարել հնագետներ և ճարտարապետներ Թ. Թորանյանը, Հ. Ա. Մարտիրոսյանը, Լ. Ա. հարսեղյանը, Ա. Ա. Քալանթարյանը, Գ. Ե. Արեշյանը, Ժ. Դ. Խաչատրյանը, Կ. Կ. Դաֆադարյանը:

Հենվելով մինչ այժմ Ծամիրամյան արշա-

վախմբի կողմից կատարված ուսումնասիրությունների վրա, հուշարձանախումբը կարելի է բաժանել կառույցների հետևյալ խմբավորումների.

ա) քաղաք-ամրոց,

բ) դամբարանադաշտ և նրա տարածքում գտնվող պաշտամունքային կառույցներ,

գ) դամբարանադաշտի հարավ-արևելյան կողմում տեղադրված «պաշտամունքային» բնույթի շինություններ,

դ) «պաշտամունքային» շինություններից դեպի հարավ, բարձր բլուրների վրա գտնվում են հնագույն շինությունների մնացորդներ, որտեղ սուկա են վանակատից պատրաստված միկրոլիթյան գործիքներ,

ե) Ծամիրամ գյուղից 2—3 կմ դեպի հյուսիս ընկած մեծ կրոզանների խումբ:

Քաղաք-ամրոցը ամբողջությամբ զբաղեցնում է մոտ 10 հա տարածությամբ լեզվակամ և հրվանդանը, որը գտնվում է գյուղի հարավային կողմում: Քաղաք-ամրոցի պաշտպանական սիստեմը բաղկացած է մի կիրճից մինչև մյուսը ձգվող հինգ շարք պարիսպներից, որոնք կառուցված են տաշված տուֆ քարե մեծ սալերով, այսպես կոչված «կիկլոպյան» շինարարական տեխնիկայով՝ ներքին և արտաքին կողմից միմյանց վրա դրված տուֆ սալաքարերի երկու շարքերի մեջ լցված է անմշակ կամ ջարդված քարե լիցքը: Պարիսպների պատերի հզորությունը մեծ չափով ավելացնում են հավասարաչափ հեռավորությամբ միմյանց հաջորդող հզոր ուղղանկյուն աշտարակները: Հրվանդանի ծայրում, որը շրջափակվում է 5-րդ շարք պարսպով, գտնվում է մեծ, ուղղանկյուն հատակագծով մի շինություն, հավանաբար պաշտամունքային բովանդակությամբ:

Քաղաք-ամրոցի հարավ-արևելյան մասից ակսվում է հին ճանապարհը, որը ձգվելով հարավային կիրճի եզրով, այնուհետև մտնում է կիրճը և դուրս գալիս հանդիպակաց դարավանդը, որտեղ փոխվել է նեկրոպոլը՝ մեռյալների քաղաքը: Մեռյալների քաղաքում սուկա են մի շարք պաշտամունքային բնույթի շինություններ, որոնք կապ չունեն այս կամ այն առանձին թաղման հետ: Նրանց մեջ յուրահատուկ տեղ է գրավում միակտոր ծայրի վրա փորագրված սրբարան-գոհասեղանը: Այն գտնվում է հարավային ձորի ձախ պրոնկիև, ուր հասցնում է քաղաք-ամրոցից ակսվող հին ճանապարհը: Չոհարանի կենտրոնում գտնվող կիսակլոր հատակագծով վերցցված ելուստը շրջապատված է օղակաձև դասավորված բաժանյալ փորվածքներով, որտեղ վրավել է սրբազան կրակը: Չոհարանի արևելյան կողմում հարավ-հյուսիս ուղ-

դուրյամբ փորված է խողովակաձև առվակ, որտեղով հոսել է գոհի նոր հեղված արյունը (նկար 2-րդ):



Դամբարանադաշտի տարբեր հատվածներում դամբարանները տարբեր խողովակաձև են դասավորված:

Ծամիրամի դամբարանադաշտին յուրահատուկ տեսք են հաղորդում նրան բնորոշ բազմաթիվ դամբարանները: Սալարկղային թաղումները գետնի մակերեսին օղակված են կողքի վրա ուղղահայաց դրված սրբատաշ տուֆ քարե սալերի շրջանակով: Որոշ սալաքարեր քանդակազարդ են: Քանդակները ներկայացնում են հեծյալների, սկավառակների, վայրի և ընտանի կենդանիների բարելեֆ պատկերներ: Ծրջանակից դուրս, հյուսիսային կողմում կառուցված են ոչ խորը, փոքրիկ սալերից կառուցված քառակուսի արկղիկներ՝ սերտ հաված շրջանակի սալերին: Տեղ-տեղ արկղիկներից ոչ հեռու պահպանվել են մինչև 3 մետր բարձրություն ունեցող պացիկ կոթող-մահարձաններ, որոնք շրջանակների սալերի համեմատ ավելի վատ են մշակված: Ժամանակին այդ կոթողները Ծամիրամի մեղայների քաղաքին քարե անտառի տեսք էին հաղորդում: Բազմաթիվ դամբարանների վրա կանգնեցված էին այլ կլոր տիպի քանդակներ: 1975 թ. պեղումներից հայտնաբերվեցին ֆալլուսներ պատկերող լավ մշակված տուֆե քանդակներ, իսկ № 30 դամբարանում՝ մարդակերպ մահարձան: Մահարձանը կանգնեցված է լողել անմիջապես թաղման վերևում և ամենայն հավանականությամբ պատկերում է շքազետներով ըսպատագինված հանգուցային: Քանդակը ռեալիստական է: Լավ են արտահայտված գլխազարդերը և հագուստի մանրամասները:

Ծամիրամի № 30 դամբարանի մահարձանը նախաուրարտական ժամանակաշրջանի առաջին խոշոր քարե մարդակերպ կլոր քանդակն է, որը հայտնաբերված է հնագիտական պեղումների ժամանակ:

Սալարկղային դամբարանների գերակշռող մասի մոտ նկատվում է թաղման լիցքի հետևյալ կառուցվածքը. տապանաքարի տակ գտնվում է նուրբ հող, որն ուղեկցվում էր կոպիտ խոհանոցային խեցեղենով և կավանոթների քեկորներով: Այս շերտին հաջորդում է գլաքարե մի քանի շարք լիցքը, որից ներքև գտնվում է նեցեցյալի աճյունը՝ շրջապատված բարձրորակ կավանոթներով, մետաղյա գործիքներով, զենքերով և զարդերով (օրինակ, դամբարան № 21, նկար 3-րդ):



Դամբարաններից հայտնաբերված թաղումնային համալիրները թվագրվում են մ. թ. ա. 11—9-րդ դդ.: Խեցեղենի մեջ գերակշռում են սև գույնի փայլեցված բարձրորակ կավանոթները, որոնք ուղեկցվում են կոպիտ խոհանոցային կավանոթներով: Բավական մեծ թիվ է կազմում ձեռքով պատրաստված խեցեղենը: Հայտնաբերված երկաթյա գործիքների և զենքերի (4 հատ) գերակշռությունը բրոնզե նմանատիպ առարկաների նկատմամբ (2 հատ) հիմք է տալիս ենթադրելու, որ հին շամիրամցիների մոտ երկաթի գործածությունը բավականին լայն տարածում էր ստացել: Երկաթյա գործիքների լայն գործածության մասին են վկայում նաև քարի մշակման վրա թափված հսկայածավաղ աշխատանքները:

1975 թ. կատարված պեղումների ընթացքում արշավախումբը հիմնականում իր առջ նպատակ էր դրել փրկել այն կոթողները, որոնց ուսումնասիրության հետաձգումը կը

նըշանակեր նրանց անդառնալի կորուստը:

Հայագիտական կենտրոնի արշավախմբի կողմից ուսումնասիրվող հուշարձաններում (Ծամիրաբունդ և Մոխրաբլուրում) առկա են նաև հելլենիստական ժամանակաշրջանի շերտեր:

Մոխրաբլուրում ոչ մեծ տարածության վրա (64 քառ. մետր) ուսումնասիրվել են անտիկ ժամանակաշրջանի բնակավայրի մնացորդները: Բնակավայրի երկու շինարարական շերտերը թվագրվում են մ. թ. ա. 3-րդ 1-ին դարերով: Այստեղից հայտնաբերված առարկաներից առավել ուշագրավ են՝ ոսկե օղբ, բարձրորակ, գունազարդ ըմպանակը, զանազան երկաթե զենքերը և գործիքները: Մոխրաբլուրի երկու հելլենիստական շինարարական շերտերն էլ հրդեհված են եղել: Դրանցից մեկը կործանվել է ռազմական հարձակման հետևանքով: Մոխրաբլուրի անտիկ բնակավայրի ուսումնասիրությունը հետաանկարալին է այն իմաստով, որ մինչ այժմ այդ ժամանակաշրջանի սովորական գյուղա-

կան տիպի բնակավայր չի ուսումնասիրված, և Հայաստանում հայտնի չեն հելլենիստական բնակարանային ճարտարապետության մուշնիք: Այս անտիկ բնակավայրը մտնում էր Հին Հայաստանի Վարդգեսավան-Վաղարշապատին հարող գյուղական օղակի կազմի մեջ, որոնք անմիջական կապի մեջ էին գտնվում մայրաքաղաքի հետ:

Կարելի է ենթադրել, որ Մոխրաբլուրը հելլենիստական ժամանակաշրջանում եղել է ագարակ:

1975 թ. կատարված այս դաշտային հրեագիտական աշխատանքներին մասնակցել են հնագետներ Գ. Ե. Սրեջյանը, Հ. Ե. Սիմոնյանը, Գ. Ա. Տիրացյանը, Ա. Ա. Բալանթարյանը, Գ. Մ. Սարգսյանը, Ս. Գ. Հմայակյանը, Գ. Գ. Քոչարյանը, Ռ. Ե. Վարդանյանը, ճարտարապետության պատմության մասնագետ Կ. Կ. Ղաֆադարյանը, ճարտարապետ Ս. Ս. Հակոբյանը, ինչպես նաև ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի ուսանողները:

Գ. ԱՐԵՅՅԱՆ, Հ. ՍԻՄՈՅԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՒԹՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԱՐՑԸ

Ժամանակակից սովետական բարձրագույն ուսումնական հաստատությունը ոչ միայն ուսումնական և գիտահետազոտական հիմնարկություն է, այլև մեծ, բազմամյուղ մի տնտեսություն, որն ապրանքա-դրամական հարաբերությունների մեջ է գտնվում առևտրական, կոմունալ, շինարարական և այլ կազմակերպությունների հետ ու կիրառում է իր ֆինանսա-տնտեսական գործունեությունը՝ խստորեն պահպանելով պետական միջոցների նպատակաուղղված ծախսումների ռեժիմը:

Մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Երևանի պետական համալսարանը, պոլիտեխնիկական, գյուղատնտեսական ինստիտուտները և այլն իրենց տրամադրության տակ ունեն նյութական, աշխատանքային և դրամական ռեսուրսներ, որոնց ծավալը գերազանցում է նույնիսկ որոշ արդյունաբերական ձեռնարկությունների հիմնական և շրջանառու ֆոնդերի գումարը: Բուհերի հաշվեկշիռներում կան հազարավոր ուսումնական, հարյուրավոր բարդ և թանկարժեք հաստոցներ և մեքենաներ:

Յուրաքանչյուր տարի Հայաստանի բուհերին հատկացվում շուրջ 30 մլն ռուբլի: Հազարավոր մանկավարժների, ուսումնա-դաստիարակչական, ուսումնա-արտադրական և վարչատնտեսական աշխատողների վճարվում է աշխատավարձ: Ամսեկան 40 հազար ուսանողների և ասպիրանտների տրվում է թոշակ:

«Բարձրագույն կրթության էկոնոմիկա» հասկացողության մեջ մենք մտցնում ենք մի շարք կոմպլեքս հարցեր, որոնք վերաբերում են բուհերի կառավարմանը և նրանց ներքին կառուցվածքին, նյութատեխնիկական մատակարարմանը, ուսումնա-գիտական բազային, ուսումնական պրոցեսին, աշխատավարձին, պլանավորմանն ու ֆինանսավորմանը:

Յուրաքանչյուր բուհի ղեկավարի իրավունք է տրված ինքնուրույն տնօրինելու իրեն վստահված հիմնարկի ֆինանսական միջոցները և տնտեսությունը: Պարզ է, որ այդ իրավունքները պետք է ելնեն պետության շահերից և կիրառեն իրենց ֆինանսական գործունեությունը՝ խստորեն պահպանելով տնտեսման ռեժիմը պետական միջոցների ծախսման գործում, ավելի քիչ ծախսեր կատարելով հասնեն բարձր ցուցանիշների կադրերի պատրաստման և գիտական հետազոտությունների բնագավառում:

Ծիշտ կերպով վարել բարձրագույն կրթության տնտեսությունը, նշանակում է կատարելագործել, պարզեցնել, էժանացնել բուհերում և նրանց ներսում կառավարման կառուցվածքը, այսինքն՝ արդյունավետ և նպատակալաց կերպով օգտագործել բուհերի աշխատողների աշխատանքը, աշխատավարձի ֆոնդը, խնայողաբար վարվել նյութական արժեքներին, ավելի ճիշտ կազմակերպել ուսումնական պրոցեսը, հաշվեկշիռ կերպով օգտագործել ֆինանսական ռեսուրսները, վերացնել անար-